որոց Հարսնացուները չէին համաձայնում կրօնափոխ լինել, և պահանջում էին, որ հայոց քահանան պսակէ։ Գէնէրալ Սուպէր—Ինտէնդանտ Կարլ—Բլօն նոցա վկայական տուաւ, որ հայոց քահանան պսակէ հայոց եկեղեցու մէջ։ Եւ այսպէս վերջացաւ գործը Նամախու բողոքականաց»։

102. Մի քանի ամիս անցած՝ 1863 թուին՝ հայոց հոգեւոր իշխանութիւնից ուղարկուեցաւ Նամախի թեմի կառավարիչ Դանիել վարդապետ Նահնազարեանը, որ մի երիտասարդ մարդ էր, ճարտարախօս, ճարպիկ ու եռանդոտ։ Սորա առաւելութիւնն իւր նախորդներից այն էր, որ հալածանքներից աւելի աշխատում էր խօսքի զէնքը գործ դնել, յաճախ ազգու քարոզներ էր խօսում, հարկաւոր համարած դէպքում գնում էր բողոքականաց մէկի կամ մի՞ւսի տունը, հրաւիրելով և նոցա իւր մօտ։

Մատթէոս կաթուղիկոսը սորան իրաւունք էր տուել բողոքականներից ցանկացողներին թոյլ տալ համարձակապէս երթեւեկել եկեղեցի աւետարանական ճշմարտաքարոզ վարդապետութիւնը լսելու։

Կարելի է ասել, որ այս առաջնորդի նշանակուելը թէեւ ուշ՝ բաւականին օգուտ բերեց գործին. նա իւր քարոզներով ժողովրդին գրաւուած պահեց եկեղեցու մէջ։

Նա ջանք արաւ թեմական ուսումնարանն էլ կարգի դնել։ Նրա օրով առաջին անգամ կազմուեցաւ կանոնագրութիւն այդ ուսումնարանի համար. ընտրուեցան հոգաբարձուներ. հրաւիրուեցան ըստ կարելոյն համապատասխան ուսուցիչներ. սկսուեցաւ կանոնաւոր գործավարութիւն և հաշուապահութիւն եւայլն։ Դարձեալ նա շինեց մայր եկեղեցւոյ բակում մի շինութիւն ուսումնարանի անուամբ։

դրամական հասոյթներ չտալու, յանդիմանութիւններ չլսելու իրենց անկարգութեանց մասին են, են։

Այս անցքերը չամախեցւոց լաւ յայտնի են, և նա ստուգելով գիտեմ և վկայում եմ։

Մեր հոգեւոր իշխանութեան պարտքն է կրօնափոխութեան ատիթները բառնալ։ Մ. Ն. Ս.